

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի կազմակերպական-իրավական
վարչության առաջին կարգի մասնագետ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ



ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՄԱՆՍԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿԾՈՍԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել է ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի ձևավորման և զարգացման հիմնական փուլերը, որի արդյունքում վեր են հանվել ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռության յուրաքանչյուր մողելը բնութագրող հիմնական հատկանիշներ, ինչպես նաև վեր են հանվել իշխանությունների բաժանման և հավասարակշռության յուրաքանչյուր մողելուն առկա այն խնդիրները, որոնք խոչընդունել են իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի արդյունավետ կիրառմանը։ Ներկայացվել է ՀՀ-ի 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին բնութագրող հիմնական հատկանիշները։

Հիմնարարեր՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, իշխանության ճյուղերի գործառության բաժանում, իշխանության ճյուղերի ինսախոսուցիոնալ բաժանում, զարումների և հավասարակշռման մեխանիզմներ, սահմանադրական փոփոխություններ, իշխանությունների բաժանման և հավասարակշռման կոնսեսուս մոդել։

«Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ
ապահովված չէ իրավունքների
բրաշխավորումը և հաստատված չէ իշխանությունների բաժանումը,
ընդհանուրապես չունի Սահմանադրություն»
Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հոչակագիր
(26 օգոստոսի 1789թ., հոդված 16)

Հայ իրավաբանական միտքը իր հերթին նպաստել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի զարգացմանը։ Դեռևս Շահամբեկյանի «Որոգայք փառաց» աշխատությունում, որի երկրորդ մասը հայոց ապագա պետության սահմանադրության նախագիծն էր, ամրագրված էին դրույթներ, որոնք իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի տեսանկյունից բավականին առաջադիմական էին։ Դրա մասսին է վկայում նաև այն հանգանանքը, որ մի շաբթ հեղինակներ բարձր են գնահատել «Որոգայք փառաց» աշխատության իրավաբանական նշանակությունը. ըստ Վ. Նազարյանի՝ «Որոգայք փառաց» աշխատությունը ժողովրդավարական խորհրդարանական հանրապետության սահմանադրություն էր, որտեղ օրենսդիր և գործադիր իշխանությունները ընտրվում էին։ Մ. Թելունցը և Գ. Թա-

նանյանը նույնպես նշում են, որ «Որոգայք փառաց» աշխատությունը հստակորեն տարանջատում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները²։

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի որոշ տարրեր ընկած էին Հայաստանի 1-ին Հանրապետության պետական կառավարման հիմքում։ Հայաստանի 1-ին Հանրապետությունը, սակայն, իր կարճատև գոյության ընթացքում չի հասցեց ձևավորել իշխանությունների բաժանման և հավասարակշռման արդյունավետ գործող համակարգ։ 1920թ. Հայաստանի 1-ին Հանրապետությունը խորհրդայնացվեց և դարձավ խորհրդային իրավամտածողության կրողը։ Խորհրդային միուրյունում ընդունված սահմանադրությունները (1924թ., 1936թ., 1977թ.) նախատեսում էին միմյանցից առանձին գործող իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերը։ Սակայն, իրականում Խորհրդային Սիությունում պետական իշխանությունը գործում էր ոչ թե իշխանությունների բաժանման, այլ դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի հիման վրա, որը ամրագրվեց 1977թ. Սահմանադրության 3-րդ հոդվածում³։ Խորհրդային Սիությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ արդյունավետ կիրառությունը անմիջականորեն կապված էր նաև կու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սակցական կառավարման հետ, որի պայմաններում բոլոր պետական նարմինները և կազմակերպությունները կազմավորվում և դեկավարվում էին իշխող կոմունիստական կուսակցության կողմից⁴:

Խորհրդային Սիուրյան փլուզումից հետո ակնհայտ դարձավ, որ պետական կառավարման վերաբերյալ խորհրդային գաղափարախոսությունը արդեն մրցունակ չէ, և անհրաժեշտ են նոր մոտեցումներ ու կառուցակարգային լուծումներ, որոնք հիմնված կլինեն ոչ թե իշխանության կենտրոնացման և կուսակցական կառավարման, այլ իշխանության ապակենտրոնացման, իրավունքի և օրենքի գերակայության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների բարձրագույն արժեքի հոչակման սկզբունքների վրա:

Խորհրդային միուրյան փլուզումից հետո ՀՀ-ն նույնականացնեց պետական կառավարման նոր համակարգի կառուցման խնդրի առջև: ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը անցել է ձևավորման և զարգացման միքանի հաջորդական փուլեր՝

1. **իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական կառավարման մոդել (1990-1991 թթ.),** ապա իշխանությունների բաժանման և հավասարակշռման նախազահական մոդել (1991-1995 թթ.)

2. **իշխանությունների բաժանման և հավասարակշռման կիսանախազահական կառավարման նախազահական-խորհրդարանական մոդել (1995-2005 թթ.)**

3. **իշխանությունների բաժանման և հավասարակշռման կիսանախազահական կառավարման խորհրդարանական-նախազահական մոդել (2005-2015 թթ.)**

4. **իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական կառավարման կոնսենսուս մոդել (2015 թ.)**

ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման նշված մոդելներից յուրաքանչյուրի փոփոխության արդյունքում տեղի է ունեցել պետական իշխանության ճյուղերի գործառությաին և ինստիտուցիոնալ համակարգի վերաբաշխում, ինչպես նաև իշխանության ճյուղերի միջև գործող զարգումների և հավասարակշռման նոր մեխանիզմների ամրագրում: ՀՀ իշխանությունների բաժանման և հավասարակշռման նշված մոդելներից յուրաքանչյուրի եռթյունը, որանց բնութագրող հիմնական հատկանիշները անհրաժեշտ է դիտարկել հետևյալ հարցերի համատեքստում՝

- **Որքանո՞վ էր ապահովված իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի ինսահատուցիչն ապահովումը,**

- **Որքանո՞վ էր ապահովված իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի գործադուրային բաժանումը**

- **Որքանո՞վ էր ապահովված իշխանության ճյուղերի անձնակազմների առանձնացումը**

- **Պետական իշխանության ճյուղերի միջև գործում էին արդյոր զարգումների և հավասարակշռման այնպիսի մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել իշխանության ճյուղերի միջև հավասարակշռվածություն**

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման հիմնախնդիրը ՀՀ-ում 1990-1995 թթ. ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը առաջին անգամ ամրագրվեց 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» հոչակագրում⁵, որի 9-րդ կետի համաձայն՝ «ՀՀ-ն իր տարածում ապահովում է (...) օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում (...):»:

Անուհետև՝ 1991 թ. սեպտեմբերի 25-ին, ընդունվեց «Անկախ պետության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ «ՀՀ Գերազույն խորհուրդը իրականացնում է օրենսդիր իշխանությունը (...), 5-րդ հոդվածի համաձայն՝ «ՀՀ բարձրագույմ պաշտոնական անձը ՀՀ Նախագահն է, որը զյուսպուրում է ՀՀ գործադիր իշխանությունը և ներկայացնում ՀՀ-ն երկի ներսում և միջազգային հարաբերություններում», իսկ 6-րդ հոդվածում նշվում էր, որ «ՀՀ դատական իշխանության մարմինների համակարգը, իրավասուրյունների շրջանակը և փոխարարելության հարցերը կարգավորվում են ՀՀ օրենդրությամբ»:

ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի զարգացման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցավ 1991 թ. օգոստոսի 1-ին ընդունված «Նախագահի մասին» ՀՀ օրենքը⁶, որով ՀՀ-ում հիմնվեց Հանրապետության Նախագահի պաշտոնը (այսուհետև՝ Նախագահ): «Հայաստանի անկախության մասին» հոչակագրի ընդունմանց հետո (23.08.1990 թ.) մինչև «Նախագահի մասին» ՀՀ օրենքի ընդունումը (01.08.1991 թ.) ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում պետական իշխանության բաժանություն մարմինը Գերազույն խորհուրդն էր, որի ձեռքում կենտրոնացված էին պետական իշխանության իիննական գործառույթները: Նշված ժամանակահատվածում ՀՀ-ում գործող իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելը առավել մոտ էր իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելին:

«Նախագահի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ

Գերազույն խորհրդի լիազորությունները սահմանափակվեցին, որի արդյունքում Նախագահը պետական իշխանության մարմինների համակարգում ձեռք բերեց լայն լիազորություններ և քաղաքական դերակատարություն: Նախագահը մի կողմից համարվում էր պետության, իսկ մյուս կողմից գործադիր իշխանության ղեկավարը: Նախագահը լայն լիազորություններ ուներ գործադիր իշխանության ոլորտում, մասնավորապես, միանձյա կերպով ձևավորում էր կառավարությունը, որը ամմիջականորեն ենթակա էր Նախագահին: Բացի այդ, Նախագահը վերահսկողություն էր իրականացնում գործադիր իշխանության մարմինների ընդունած որոշումների օրինականության նկատմամբ («Նախագահ մասին» օրենքի 8-րդ հոդված):

Նախագահը լայն լիազորություններ ուներ օրենսդրական ոլորտում, մասնավորապես ուներ օրենսդրական նախաձեռնության իրավունք, բացի այդ կարող էր վետո կիրառել Գերազույն խորհրդի կողմից ներկայացված նախագծի վերաբերյալ, որը օրենսդիր իշխանությունը զսպելու հզոր գործիք էր գործադիր իշխանության ձեռքին, սակայն, Նախագահի վետոյի իրավունքը բացարձակ չէր, և այն Գերազույն խորհրդի կողմից կարող էր հաղթահարվել:

1991թ. նոյեմբերի 19-ին ընդունվեց «Գերազույն խորհրդի մասին» ՀՀ օրենքը⁸, համաձայն որի՝ օրենսդիր իշխանությունը իրականացնում էր Գերազույն խորհուրդը: Պետական իշխանության մարմինների համակարգում Գերազույն խորհրդի լիազորությունների ամբողջական և համակարգված վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ Գերազույն խորհրդի լիազորությունները բավականին սահմանափակ էին, հատկապես գործադիր իշխանության վերահսկողություն ոլորտում: Բայց, դրանով հանդերձ, Գերազույն խորհուրդը ուներ որոշակի լծակներ գործադիր իշխանության գործունեության վրա ազդելու համար. մասնավորապես կարող էր սահմանադրական դատարանի եզրակացության առկայության դեպքում վերացնել Սահմանադրությանը և օրենքներին հակասող Նախագահի իրամանագրերը և կարգադրությունները («Նախագահ մասին» օրենքի 10-րդ հոդված), բացի այդ, Գերազույն դատարանի եզրակացության առկայության դեպքում կարող էր պաշտոնանկ անել Նախագահին և փոխնախագահին («Նախագահ մասին» օրենքի 11-րդ հոդված):

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի տեսանկյունից բավականին խնդրահարույց էր օրենսդրությամբ ամրագրված պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգը: Մասմավորապես, «Գերազույն խորհրդի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համա-

ձայն՝ «(...)Գերազույն խորհուրդը սահմանում է պետական իշխանության, պետական կառավարման և դատական իշխանության մարմինների իրավասուրյունը, կազմակերպման և գործունեության կարգը(...):»: Նշված նորմը խնդրահարույց էր այն տեսանկյունից, որ միմյանցից առանձնացնում էր «պետական իշխանության», «պետական կառավարման» «դատական իշխանության» մարմինների հասկացությունները, ինչը չի բխում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ընդհանուր դրույթներից, քանի որ դատական իշխանությունը համարվում է պետական իշխանության բաղկացուցիչ մաս, և այն պետք է դիտարկել պետական իշխանության մարմինների համակարգում:

Իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի անձնակազմների առանձնացման տեսանկյունից առկա էին որոշ խնդիրներ, որի արդյունքում ստեղծվում էր պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միատեղման իրական հնարավորություն: Այսպես՝ «Նախագահի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «(...)Նախագահի և փոխնախագահի կողմից իրենց լիազորությունների կատարման անհնարինության դեպքում Նախագահի լիազորությունների իրականացումը փոխանցվում էր Գերազույն խորհրդի նախագահին, որի արդյունքում Գերազույն խորհրդի նախագահի ձեռքում կենտրոնանում էր ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր իշխանության գործառույթների իրականացումը փոխանցվում էր Գերազույն խորհրդի նախագահին, որի արդյունքում Գերազույն խորհրդի նախագահի ձեռքում կենտրոնանում էր պետական իշխանության համար, կարծում ենք, առավել ճիշտ կլիներ, որ Նախագահի և փոխնախագահի կողմից իրենց լիազորությունների կատարման անհնարինության դեպքում Նախագահի լիազորությունների իրականացումը վերապահվեր ոչ թե Գերազույն խորհրդի նախագահին, այլ հանրապետության վարչապետին, որի արդյունքում հնարավոր կլիներ խուսափել անձի ձեռքում պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի կենտրոնացումից:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման հիմնախնդիրը
ՀՀ 1995թ. Սահմանադրության՝ համատերստում (այսուհետև՝ '1995թ. Սահմանադրություն): 1995թ. Սահմանադրությունում, որպես սահմանադրական կարգի հիմունք, հոչակվեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Սահմա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարածատման սկզբունքի հիման վրա: Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ»:

1995թ. Սահմանադրությամբ Նախագահը կարևոր դերակատարություն ուներ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման տեսանկյունից, քանի որ Սահմանադրության 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «ՀՀ Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը(...): Փաստորեն, Նախագահը պետք է ապահովեր պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի բնականոն գործունեությունը, որը ենթադրում էր նաև պետական իշխանության ճյուղերի միջև սահմանադրական լիազորությունների իրականացման հետ կապված առաջացած վեճերի լուծում: Սակայն, կարծում ենք, որ պետական իշխանության ճյուղերի համակարգում Նախագահի իրավական կարգավիճակը թույլ չէր տալիս Նախագահին արդյունավետ կերպով ապահովել իշխանության ճյուղերի բնականոն գործունեություն: Խնդիրը կայանում է նրանում, որ Նախագահը համարվում էր գործադիր իշխանության ղեկավար, որի արդյունքում անխուսափելիորեն կաշկանդված էր գործադիր իշխանության շահերով և պետական իշխանության ճյուղերի միջև սահմանադրական վեճերի առաջացման դեպքում չէր կարող անաշատ արդիտիք դեր կատարել: Հետևաբար, պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի բնականոն գործունեության ապահովման նշված մեխանիզմը արդյունավետ չէր համարվում:

Միաժամանակ, պետք է նշենք, որ պետական իշխանության ճյուղերի միջև առաջացած սահմանադրական վեճերի հաղթահարման այլ մեխանիզմ 1995թ. Սահմանադրությունը չէր տալիս. այդպիսի լիազորություն վերապահված չէր նաև Սահմանադրական դատարանին, որը ժամանակակից իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման տեսանկյունից իշխանության ճյուղերի միջև առաջացած վեճերի հաղթահարման ոլորտում ունի լայն դերակատարություն:

1995թ. Սահմանադրության հիմքում ընկած էր իշխանությունների բաժանման և հավասարակշռման կիսանախագահական կառավարման նախա-

գահական-խորհրդարանական մոդել¹⁰. այս մոդելի հիմնական հատկանիշն այն է, որ կառավարությունը ձևավորվում է Նախագահի կողմից՝ առանց պառլամենտի հետ նախանական համաձայնության, սակայն քաղաքական պատասխանատվությունը է կրում ինչպես Նախագահի, այնպես էլ պառլամենտի առջև:

ՀՀ 1995թ. Սահմանադրությամբ գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգը բավականին խնդրահարույց էր. խնդիրը կայանում է նրանում, որ Սահմանադրության 85-րդ հոդվածում նշվում էր, որ «ՀՀ գործադիր իշխանությունը իրականացնում է ՀՀ կառավարությունը: Կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից(…), միաժամանակ, Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ «Կառավարության նիստերը իրավիրում և վարում է Հանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետ»: Փաստորեն, մի կողմից Սահմանադրությունը նշում է, որ գործադիր իշխանությունը իրականացնում է ՀՀ կառավարությունը, իսկ մյուս կողմից նշվում է, որ կառավարության նիստերը ղեկավարում է Նախագահը, ինչի արդյունքում անորոշ էր մնում Նախագահի իրավական կարգավիճակը գործադիր իշխանության ոլորտում: Այս պայմաններում հստակ չէր, թե կառավարության ոչ արդյունավետ աշխատանքի դեպքում ով պետք է պատասխանատվություն կրի՝ Նախագահը, թե՝ կառավարությունը:

Ընդհանուր առմանք, պետք է նշենք, որ կառավարության ձևավորման և գործունեության ոլորտում Նախագահը ուներ լայն լիազորություններ: Մասնաւորապես, Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կառավարությունը ձևավորվում էր Նախագահի կողմից՝ արտախորհրդարանական ճանապահով: Միաժամանակ, Կառավարությունը բաղադրական պատասխանատվություն էր կրում ինչպես Նախագահի, այնպես էլ Ազգային ժողովի առջև (84-րդ հոդված): Նախագահը լայն լիազորություններ ուներ նաև կառավարության գործունեության կազմակերպման ոլորտում, քանի որ վավերացնում էր կառավարության ոլորտում (86-րդ հոդված):

1995թ. Սահմանադրությամբ բավարար երաշխիքներ ամրագրված չէին օրենսդիր իշխանության արդյունավետ գործունեության համար: Նախ և առաջ, Ազգային ժողովը չուներ կառավարության ձևավորման գործում որևէ լուրջ դերակատարություն: Այս հարցում ԱԺ-ի դերակատարությունը կայանում էր նրանում, որ կառավարությունը իր կազմավորումից հետո ԱԺ-ի հավանության էր ներկայացնում իր գործունեության ծրագիրը՝ դնելով իր վստահության հարցը, և եթե ԱԺ-ն անվստահություն

չեր հայտնում կառավարությանը ապա կառավարության ծրագիրը համարվում էր ընդունված:

1995թ. Սահմանադրությամբ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման տեսանկյունից խնդիրներից մեկը առնչվում էր այն հանգամանքին, որ ԱԺ-ն գտնվում էր արձակման մշտական սպառնալիքի տակ, և Սահմանադրությամբ ամրագրված չէին ԱԺ-ի արձակման հիմքերը և կարգը: Այսպիսի իրավակարգավորման պայմաններում Նախագահը իր հայեցողությամբ ցանկացած ժամանակ կարող էր արձակել ԱԺ-ն, սակայն նինջև ԱԺ-ի արձակման մասին որոշում ընդունելը Նախագահը պետք է խորհրդակցեր Ազգային ժողովի նախագահի և Վարչապետի հետ (55-րդ հոդվածի 3-րդ մաս): Նախագահի կողմից իր հայեցողությամբ ԱԺ-ի արձակումը իրականում որևէ երաշխիք չէր տալիս ԱԺ-ի գործունեության կայունության ապահովման տեսանկյունից, որի արդյունքում խախտվում էր իշխանության ճյուղերի միջև հավասարակշռվածությունը:

ՀՀ 1995թ. Սահմանադրությամբ խնդրահարույց էր նաև դատական իշխանության ինստիտուցիոնալ համակարգը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Սահմանադրությունը նույնիսկ չէր նշում, թե ՀՀ-ում գործող որ դատարանն է համարվում բարձրագույն դատական ատյանը, մասնավորապես Սահմանադրության 92-րդ հոդվածում նշային նշում է, որ «ՀՀ ընդիհանուր իրավասության դատարաններն են՝ առաջին ատյանի դատարանները, վերաբենիք դատարանները և վճռաբեկ դատարանը (...»): Նշում սահմանադրական հոդվածում չէր նշում նաև սահմանադրական դատարանի մասին, որի արդյունքում դատական իշխանության համակարգում սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ տեղը մնում էր անորոշ: Միաժամանակ պետք է նշենք, որ գործառության առումով բավականին բույլ էր սահմանադրական արդարադատության ինստիտուտը, քանի որ Սահմանադրական դատարանին վերապահվել էր ընթել միայն խիստ սահմանափակ շրջանակի գործեր, սահմանափակ էր նաև Սահմանադրական դատարան դիմոր սուրյեկտների շրջանակը (101-րդ հոդված):

1995թ. Սահմանադրությամբ լուրջ խնդիրների կային նաև իշխանության ճյուղերի գործառության բաժանման սկզբունքի ապահովման տեսանկյունից, ինչը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ նախատեսված էր օրենսդրական դեեւագործման ինստիտուտը: Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Ազգային ժողովը կարող է լիազորել կառավարությամբ՝ ընդունել օրենքի ուժ ունեցող

որոշումներ, որոնք գործում են Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում և չեն կարող հակասել օրենքներին: Այդ որոշումներն ստորագրում է Հանրապետության Նախագահը»: Սահմանադրության նշված հոդվածը գործադիր իշխանությանը լիազորում էր ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որի արդյունքում կառավարության ձեռքում կենտրոնանում էր նաև օրենսդիր իշխանության գործառույթը: Կառավարությանն այսպիսի լիազորություն տալով հանդերձ՝ Սահմանադրությունը բավարար երաշխիքներ չեր ամրագրել օրենքի ուժ ունեցող որոշումների ընդունման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու առումով: Մասնավորապես Սահմանադրությունում նշում է, որ օրենքի ուժ ունեցող որոշումները չպետք է հակասեն օրենքներին, և որպես վերահսկողական գործիք նշում էր, որ օրենքի ուժ ունեցող որոշումները պետք է ստորագրեն Նախագահի կողմից, ինչը, կարծում ենք, բավարար երաշխիքներ չեր տալիս այդ որոշումների օրինականության ապահովման տեսանկյունից, քանի որ Նախագահը, ըստ Էության, համարվում էր գործադիր իշխանության դեկավարը և հրավիրում ու վարում էր կառավարության նիստերը:

Հշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման հիմնախնդիրը
ՀՀ 2005թ. սահմանադրական փոփոխությունների համատերաստում: 1995թ. Սահմանադրությունում (այդ բանով՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում) առկա խնդիրների լուծման նպատակով 2005թ. ՀՀ-ում կատարվեցին սահմանադրական փոփոխությունները: 2005թ. փոփոխություններով Սահմանադրությամբ (այսուհետև՝ 2005թ. Սահմանադրություն) ՀՀ-ում անցում կատարվեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման կիսանախագահական կառավարման խորհրդարանական-նախագահական մոդելի¹², որի արդյունքում Նախագահի մի շարք լիազորություններ սահմանափակվեցին և ընդլայնվեցին ԱԺ-ի լիազորությունները:

ՀՀ 2005թ. Սահմանադրությամբ օրենսդիր և գործադիր իշխանության ոլորտներում Նախագահի լիազորությունները նվազեցին, որի արդյունքում՝

ա) Նախագահը գրկվեց արտախորհրդարանական ճանապարհով միանձնյա կառավարությունը ձևավորելու լիազորությունից, որի արդյունքում ԱԺ-ն որոշակի դերակատարություն ստացավ կառավարության ձևավորման գործում, մասնավորապես Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, Նախագահը «Ազգային ժողովով կարող է լիազորել կառավարության անդամների բաշխման և պատգամավորական խմբակցությունների հիման վրա վարչապետի և այլակուստ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին(...»։ այսպիսի իրավակարգավորման պայմաններում Նախագահը պետք է վարչապետ նշանակեր պառամենտական մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէր, ապա՝ առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին։ Սակայն նշված սահմանադրական ձևակերպություներից բավականին անորոշ էին «պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին» և «առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին» հասկացությունները։

Խնդիրը կայանում է նրանում, որ Սահմանադրությամբ հստակեցված չէր այն մեխանիզմը, որով հնարավոր լիիներ որոշել պատգամավորների մեծամասնության կամ առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին։ Այդպիսի պայմաններում եթե Նախագահը Ազգային ժողովում ուներ քաղաքական մեծամասնության աջակցությունը, ապա, խորհրդակցելով խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի հետ, վարչապետ էր նշանակում իր նախընտրած թեկնածուին։ Սակայն, Վարչապետի նշանակումը բարդանում է այն դեպքում, եթե Նախագահը խորհրդարանում քաղաքական մեծամասնության աջակցությունը չէր վայելում, քանի որ հարց է առաջանում, թե ինչպես պետք է լուծվեր այն իրավիճակը, եթե Նախագահի ներկայացրած վարչապետի թեկնածուն խորհրդարանական մեծամասնության վստահությունը չվայելեր։ Սակայն, իրականում վերը նշված երկու իրավիճակներում էլ Նախագահը վարչապետ էր նշանակում իր նախընտրած թեկնածուին, իսկ մինչև վարչապետի նշանակումը պառամենտական բնարկումները գուտ ֆորմալ բնույթ էին կրում։ Միաժամանակ, Ազգային ժողովը պետք է հաստատեր նոր ձևավորված կառավարության գործունեության ծրագիրը, սակայն այս լիազորությունը բավականին վտանգավոր լծակ էր Ազգային ժողովի ձեռքում գործադրի իշխանությանը զատելու համար, քանի որ եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չտա կառավարության ծրագրին, ապա Նախագահը արձակում է Ազգային ժողովը (74.1-րդ հոդված)։ Ուստի, անկախ այն հանգամանքից թե ով կլիներ վարչապետը, և ինչպիսին կլիներ կառավարության ծրագրիը, Ազգային ժողովը արձակումից խուսափելու համար ստիպված պետք է հաստատեր կառավարության ծրագրիը։

բ) Նախագահը 2005թ. Սահմանադրությամբ գրկեց իր հայեցողությամբ վարչապետին պաշտո-

նանկ անելու լիազորությունից, որի արդյունքում վարչապետը այլևս քաղաքական պատասխանատվություն էր կրում միայն Ազգային Ժողովի առջև։ Մասնավորապես, Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝ «Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ կարող է անվստահություն հայտնել կառավարությամբ։ Կառավարության անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը կարող է ներկայացվել Հանրապետության Նախագահի կամ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից (...»։ Նախագահը կարող էր վարչապետին պաշտոնանկ անելու վերաբերյալ միայն առաջարկություն ներկայացնել Ազգային ժողովին։ 2005թ. Սահմանադրությամբ վարչապետի լիազորությունների ծավալը, ըստ Էության, կախված էր Նախագահ-Ազգային ժողով փոխհարաբերությունների բնույթից, քանի որ եթե Նախագահը Ազգային ժողովում չուներ քաղաքական մեծամասնության վստահությունը, ապա վարչապետը Հանրապետության Նախագահից ձեռք էր բերում գործունեության որոշակի ինքնուրույնություն, սակայն մեկ այլ դեպքում, եթե Նախագահը ուներ խորհրդարանական մեծամասնության աջակցությունը, ապա վարչապետը դառնարկերի իրականացնող, ընդ որում, Նախագահը ցանկացած ժամանակ կարող էր Ազգային ժողովի միջոցով դադարեցնել վարչապետի լիազորությունները։

գ) Նախագահը 2005թ. Սահմանադրությամբ գրկեց Ազգային ժողովը արձակելու հայեցողական լիազորությունից։ Սահմանադրության 74.1-րդ հոդվածի համաձայն՝ «Հանրապետության Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե Ազգային ժողովը երկու անգամ ամրմնեց երկու անսպա ընթացքությունը հավանություն չի տալիս կառավարության ծրագրին։ Հանրապետության Նախագահը Ազգային ժողովը նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ կարող է արձակել Ազգային ժողովը, եթե ա) Ազգային ժողովը երրական նատաշրջանի երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ, բ) երրական նատաշրջանի ընթացքում Ազգային ժողովի միասներ երեք ամսից ավելի չեն գումարվում, զ) երրական նատաշրջանի ընթացքում Ազգային ժողովը երեք ամսից ավելի լր կողմից քննարկվող հաղուրի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում։ Աժ-ի արձակման հետ կապված սահմանադրական փոփոխությունը, կարծում ենք, առանցքային է համարվում իշխանությունների բաժանման և հավասարկուման սկզբունքի ապահովման տեսանկյու-

նից, քանի որ Ազգային ժողովը Նախագահից ձեռք բերեց գործունեության որոշակի կայունություն, որի արդյունքում Նախագահը այլևս սեփական հայեցողությամբ չէր կարող արձակել Ազգային ժողովը:

2005թ. Սահմանադրությամբ գործադիր իշխանությունը շարունակում էր երկատված բնույթ կրել: Սահմանադրությունում չէր նշվում, թե որ մարմիններն են իրականացնում գործադիր իշխանություն, սակայն սահմանադրական նորմերի վերլուծությունից բխում է, որ գործադիր իշխանության իրականացումը վերապահված էր Նախագահին և Կառավարությանը: Մասնավորապես, Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ «Կառավարությունը մշակում և իրականացնում է ՀՀ ներքին քաղաքականությունը. ՀՀ արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության նախագահի հետ համատեղ (...): Կառավարությունը մի շաբթ ոլորտներում Նախագահից ձեռք բերեց գործունեության ինքնուրույնություն. մասնավորապես, Նախագահը այլևս չէր վարում կառավարության նիստերը (բացառությամբ Սահմանադրությամբ ամրագրված դեպքերի): Բացի այդ, Նախագահը չէր վավերացնում կառավարության որոշումները (բացառությամբ 88.1-րդ հոդվածով սահմանված դեպքի): Այս ամենով հանդերձ, պետք է նշենք, որ Նախագահը կառավարության գործունեության օրինականության նկատմամբ իրականացնում է հսկողություն, մասնավորապես Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ «Հանրապետության նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար»: Այսինքն նորմի ամրագրումը, բավականին առաջադիմական էր 1995թ. Սահմանադրության համեմատությամբ, քանի որ 1995թ. Սահմանադրությամբ Նախագահը կարող էր առանց իիմնավորումների շվավերացնել կառավարության որոշումները: Սակայն, 2005թ. Սահմանադրությամբ Նախագահի այդ լիազորությունը վերացվեց, և նախատեալեց Նախագահի ու կառավարության միջև կառավարության որոշումների օրինականության վերաբերյալ առաջացող վեճերի սահմանադրական ճանապարհով լուծման հնարավորություն, այն է՝ Նախագահը կառավարության որոշումների օրինականության ստուգման նպատակով կարող է դիմել սահմանադրական դատարան:

2005թ. Սահմանադրությամբ պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի փոխարքերություններում ընդլայնվեց Աժ-ի սահմանադրական լիազորությունների շրջանակը: Որի արդ-

յունքում՝ Աժ-ն այլևս չէր գտնվում լուծարման մշտական սպառնալիքի ներքո, որոշակի լժակներ ստացավ կառավարության ձևավորման հարցում, բացի այդ, Աժ-ն նոր լիազորություններ ստացավ պետական պաշտոններում նշանակումներ կատարելու ոլորտում: Օրենսդիր իշխանության գործառության անկախության ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ 2005թ. Սահմանադրությամբ վերացվեց օրենսդրական դելեգավորման ինստիտուտը (78-րդ հոդված), բացի այդ, առանցքային էր համարվում նաև Սահմանադրության 83.5-րդ հոդվածը, որով հստակեցվեցին այն ոլորտները, որոնք պետք է կարգավորվեն միայն օրենքով: Սահմանադրական մակարդակով հստակեցվեցին նաև միջազգային այն պայմանագրերի շրջանակը, որոնք պետք է վավերացվեն Ազգային ժողովի կողմից (81-րդ հոդված): Զնայած այն հանգամանքին, որ Սահմանադրությամբ ընդլայնվեց Աժ-ի լիազորությունների շրջանակը, սակայն դեռևս բավարար երաշխիքներ նախատեաված չէին Աժ-ի կողմից օրենսդրական ու վերահսկողական ոլորտներում իր գործառույթների արդյունավետ իրականացման համար:

2005թ. Սահմանադրությունը առաջընթաց ապահովեց դատական իշխանության անկախության ապահովման տեսանկյունից: Դա պայմանագրավորված էր այն հանգամանքով, որ նոր կարգավիճակ ստացավ Արդարադատության խորհուրդը, որի կազմում այլևս ընդգրկված չէին Նախագահը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը: Սակայն, ընդանուր առմամբ սահմանադրական մակարդակում դեռևս ամրագրված չէին դատական իշխանության գործառության, կառուցակարգային անկախության ապահովման բավարար երաշխիքները: Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընդլայնվեց սահմանադրական դատարանի լիազորությունների և սահմանադրական դատարանի դիմունությունների շրջանակը, սակայն սահմանադրական դատարանը չտացավ պետական իշխանության մարմինների միջև առաջացող վեճերի լուծման լիազորություն:

Հշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի ապահովման հիմնախնդիրը՝ ՀՀ 2015թ. սահմանադրական փոփոխությունների¹³ համատեքստում: 2005թ. Սահմանադրությունում առկա խնդիրները (այդ թվում՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռության համակարգում) լուծելու նպատակով ՀՀ-ում 2015թ. տեղի ունեցան սահմանադրական փոփոխությունները, որոնք առանցքային են համարվում իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի ապահովման տեսանկյունից: 2015թ. փոփոխություննե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րով Սահմանադրությունը (այսուհետև՝ 2015թ. Սահմանադրություն) որպես սահմանադրական կարգի հիմունք ամրագրեց իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը: Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրության և օրենքներին համապատասխան օրենսդրի, գործադրի և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա»:

2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ-ում գործող իշխանությունների բաժանման և հավասարակշռման կիսանախազահական կառավարման խորհրդարանական-նախագահական մոդելից անցում կատարվեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման կիսանախազահական կառավարման կոնսենսուս մոդելին¹⁴: ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական կառավարման կոնսենսուս մոդելի անցումը ենթադրում է՝

ա) պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգի վերափոխում, որը ենթադրում է՝ 1. Հանրապետության Նախագահի ինստիտուցիոնալ առանձնացվածություն գործադրի իշխանությունից, 2. դատական իշխանության համակարգում սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ տեղի և դերի հստակեցում, 3. իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ և գործառության անկախություն ունեցող սահմանադրական մարմինների առկայություն («Սարու իրավունքերի պաշտպան», «Կենտրոնական ընտրական հանձնաժողով», «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով», «հաշվեբնիշ պայատ», «Կենտրոնական բանկ», «դատախազություն»):

բ) պետական իշխանության ճյուղերին վերապահված գործառույթների վերաբաշխում, որը ենթադրում է՝ 1. Հանրապետության Նախագահի գործառության առանձնացվածություն գործադրի իշխանությունից, որի արդյունքում Նախագահը իրականացնում է բացառապես պետության գլխին բնորոշ վերկուսակցական անաշառ արքիտր գործառույթները, 2. Ազգային ժողովի գործառույթների և լիազորությունների շրջանակի վերանայումը, որը ենթադրում է խորհրդարանի քաղաքական դերի բարձրացումը, 3. Սահմանադրական դատարանին իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման տեսանկյունից նոր գործառույթի վերապահում (լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը) 4. անկախ սահմանադրական մարմիններին վերապահված գործառույթների շրջանակի որոշակիացում:

գ) պետական իշխանության մարմինների միջև գաղումների, հավասարակշռման և փոխարացումների նոր մեխանիզմների առկայություն, որը ենթադրում է իշխանության օրենսդրի և գործադրի ճյուղերի միջև գաղումների և հավասարակշռման նոր մեխանիզմների զարգացում, որի արդյունքում պետական իշխանության ճյուղերի միջև փոխարաբերություններն առավել շատ կիմնվեն փոխարացումների և համագործակցության մեխանիզմների վրա, ինչը կնպաստի օրենսդրի և գործադրի իշխանության ճյուղերի միջև սերտ համագործակցության զարգացմանը և հնարավոր հակամարտության նվազեցմանը¹⁵:

Առփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի յուրաքանչյուր փուլի անցում իրենից ենթադրել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման նոր մոդելի անցում, հետևաբար՝ պետական իշխանության ճյուղերի փոխարաբերություններում նոր մոտեցումների և մեխանիզմների ներդրում: ՀՀ սահմանադրական զարգացումների արդյունքում աստիճանաբար հաղթահարվեց պետական իշխանության ճյուղերի համակարգում գործադրի իշխանության գերակայությունը, որի արդյունքում ընդլայնվեցին օրենսդրի իշխանության լիազորությունները: Այս առումով առանցքային են համարվում 2015թ. սահմանադրական փոփոխությունները, որի արդյունքում ՀՀ-ում անցում կատարվեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական կառավարման կոնսենսուս մոդելին: ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական կառավարման կոնսենսուս մոդելի անցումը բավականին բարդ գործընթաց է, որը պահանջում է խորհրդարանական կառավարման մոդելը բնութագրող առանձնահատկությունների համակարգված և ամբողջական վերլուծություն: ՀՀ-ում այս մոդելի արդյունավետ գործունեության համար նախ և առաջ անհրաժեշտ են այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովվեն իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգի և իշխանության ճյուղերի գործառույթների սահուն և առանց սահմանադրական ճգնաժամների վերաբաշխման ապահովում:

¹ Տե՛ս Ռամիր Ռամիրյան Կոնституция Հայաստանի 1773թ., “Հայաստանի կառավարման օրենք” (18-րդ դարի երկրորդ կերպ), Խաչատրյան Ա. Բ. Մոսկվա, “ՄԳՕՊՍ” 1998, ս. 3-5.

² Տե՛ս Մայիկ Թելունց, «Ֆշամանությունների բաժանումը և հայ իրավաբարական միտքը (18-րդ դարի երկրորդ կերպ)», 2001թ. Էջ 183, հասանելի է՝ [http://hpj.asj-oa.am/4339/1/2001-3\(180\).pdf](http://hpj.asj-oa.am/4339/1/2001-3(180).pdf), Տե՛ս նաև Գրիգոր Թամանյան, «Որոշայի փառաց» (Հրատարակման 230-ամյակի առթիվ) Էջ 146-147 հասանելի է՝ http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/13._Grigor_Tananyan.pdf

³ Տե՛ս Օсновной закон, Союза Советских Социалистических Республик Принята на внеочередной седьмой сессии Верховного Совета СССР девятого созыва 7 октября 1977г., <http://www.hist.msu.ru/ER/Etext/cnst1977.htm>

⁴ Տե՛ս Բաղլայ Մ. Վ., Գաբրիչիձ Բ. Ի. “Կոնստիտուցիոնի օրենք Ռուսական Ֆեդերացիայում” Մոսկվա, 1996, ս. 302., Տե՛ս Հ. Հակոբյան, «Պատղամենտը և պատղամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում», «Տիգրան Ալեք» 2007թ., Էջ 39., Տե՛ս նաև F. Joseph Dresen and William E. Pomeranz Washington, «Separation of powers in Russia and Ukraine, a comparative perspective conference proceedings» Էջ 8 հասանելի է՝ https://www.wilsoncenter.org/sites/default/files/OP306_separation_powers_russia_ukraine_pomeranz_2011.pdf

⁵ Տե՛ս «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», ընդունել է ՀՀ Գերազույն խորհուրդը 23.08.1990, սկզբնաղյուրը ՀՀԳԽ 1990/16 հասանելի է՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1895>

⁶ Տե՛ս «Անկախ պետության հիմնադրույթների մասին» օրենք ընդունել է Գերազույն խորհուրդը 25.09.1991, սկզբնաղյուրը ՀՀԳԽ 1991/18, ուժը կորցրած է ճանաչվել 13.07.1995 Հասանելի է՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=2>

⁷ Տե՛ս «Նախագահի մասին» ՀՀ օրենքը, ընդունել է ՀՀ Գերազույն խորհուրդը 01.08.1991թ. ՀՀԳԽ 1991/15, ուժը կորցրած է ճանաչվել 04.01.2007 թ. հասանելի է՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=85>

⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Գերազույն խորհրդի մասին», ՀՀ Գերազույն խորհրդի կողմից 18 նոյեմբերի 1991թ., ուժը կորցրած է ճանաչվել 04.01.2007թ., ՀՀԳԽ 1991/22, հասանելի է՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=89>

⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է հանրաքվեի միջոցով 05.07.1995թ., հասանելի է՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=1>

¹⁰ Այս մոդելը հասուն է նաև հետևյալ պետություններին՝ Նիգերիա, Սենեգալ, Կարտ Վերդե, Ֆրանսիա, Պորտուգալիա, Արվակիա

¹¹ ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով) 27.11.2005, հասանելի է՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=75780>

¹² Այս մոդելը հասուն է նաև հետևյալ պետություններին՝ Բուլղարիա, Կարտ Վերդե, Խորվաթիա(2000թ.-), Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Իռլանդիա, Լիտվա, Սակեղնիա, Սլովակիա, Լեհաստան, Ռումինիա, Պորտուգալիա (1983թ.-), Արվակիա, Սլովենիա, Շուկրանիա (2007-2010թ.)

¹³ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 06.12.2015, հասանելի է՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>

¹⁴ Իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական կառավարման կոնսենսուս մոդելը հասուն է խորհրդարանական կառավարման հանրապետական ծե ունեն հետևյալ՝ Ավստրիա, Չինիանդիա, Գերմանիա, Հնդկաստան, Իռանդիա, Իտալիա, Լատվիա, Արվակիա, Սլովենիա, Ըփեցարիա, Խորաթ, Հունաստան, Թուրքիա, 1990-ական թվականներից խորհրդարանական կառավարման հանրապետական ծե հաստատվեց նաև հետոցիալիստական մի շարք պետություններում Ալբանիա, Հունգարիա, Լատվիա, Սլովակիա, Էստոնիա ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն:

¹⁵ Տե՛ս Տեմով Ե. Ի., “Форма государства, теория права и государства”, Москва., 1996, ст.306.

Ներսեսական և միջազգային իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է հանրաքվեի միջոցով 05.07.1995թ., հասանելի է՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=1>

2. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով) ընդունվել է հանրաքվեի միջոցով 27.11.2005, հասանելի է՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=75780>

3. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով) ընդունվել է հանրաքվեի միջոցով 06.12.2015, հասանելի է՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>

4. Constitution of French, 1791, title 3, հասանելի է՝ <http://wp.stu.ca/worldhistory/wp-content/uploads/sites/4/2015/07/French-Constitution-of-1791.pdf>

5. Կոնստիտուցիոն (օրենք) Սահմանադրություն Հայաստանի անկախության մասին կոնստիտուցիոն օրենքը կառավարման կոնսենսուս մոդելը հասուն է խորհրդարանական կառավարման հանրապետական ծե ունեն հետևյալ՝ Ավստրիա, Չինիանդիա, Գերմանիա, Հնդկաստան, Իռանդիա, Իտալիա, Լատվիա, Արվակիա, Սլովենիա, Ըփեցարիա, Խորաթ, Հունաստան, Թուրքիա, 1990-ական թվականներից խորհրդարանական կառավարման հանրապետական ծե հաստատվեց նաև հետոցիալիստական մի շարք պետություններում Ալբանիա, Հունգարիա, Լատվիա, Սլովակիա, Էստոնիա ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն:

6. «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», ընդունել է ՀՀ Գերազույն խորհուրդը 23.08.1990, սկզբնաղյուրը ՀՀԳԽ 1990/16 հասանելի է՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=1895>

7. «Անկախ պետության հիմնադրույթների մասին» օրենք, ընդունել է Գերազույն խորհուրդը 25.09.1991, ՀՀԳԽ 1991/18, ուժը կորցրած է ճանաչվել 13.07.1995 Հասանելի է՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=2>

8. «Նախագահի մասին» օրենք, ընդունել է Գերազույն խորհուրդը 01.08.1991թ. ՀՀԳԽ 1991/15, ուժը կորցրած է ճանաչվել 04.01.2007 թ. հասանելի է՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=85>

9. «ՀՀ Գերազույն խորհրդի մասին», ընդունվել է ՀՀ Գերազույն խորհրդի կողմից 18 նոյեմբերի 1991թ., ուժը կորցրած է ճանաչվել 04.01.2007թ., ՀՀԳԽ 1991/22, հասանելի է՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=89>

Տեսական գրականություն

10. Шаамир Шаамирян Конституция Армения 1773г., “Армянское уложение законов для управления страной армянской”, Хачатрян А. Б. Москва, “МГОПУ” 1998,
11. Մալիկ Թելունց, «Դշխանությունների բաժանումը և հայ իրավարադարձական միտքը (18-րդ դարի երկրորդ կես)», 2001թ., հասանելի էր՝ [http://hpj.asj-oa.am/4339/1/2001-3\(180\).pdf](http://hpj.asj-oa.am/4339/1/2001-3(180).pdf), Տես նաև Գրիգոր Թումանյան «Որոգայթ փառաց» (Հրատարակման 230-ամյակի առթիվ) հասանելի էր՝ http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barexohumner/13_Grigor_Tananyan.pdf
12. Багдай М. В., Габричидзе Б. Н. Конституционное право Российской Федерации, Москва., 1996.
13. F. Joseph Dresen and William E. Pomeranz Washington, «Separation of Powers in Russia and Ukraine, a comparative perspective conference proceedings» էջ 8 հասանելի էր՝ https://www.wilsoncenter.org/sites/default/files/OP306_separation_powers_russia_ukraine_pomeranz_2011.pdf
14. Темпов Е. И., “Форма государства, теория права и государства”, Москва., 1996.
15. Հ.Հակոբյան. «Պատղամենտը և պաղամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում», «Տիգրան Մեծ» 2007թ.:

Այկ Կեսօյն

Специалист первой категории организационно-правового управления министерства юстиции РА,
аспирант академии государственного
управления Республики Армения

РЕЗЮМЕ***Проблема обеспечения принципа разделения и
уравновешивания властей в Республике Армения***

В рамках статьи изучались этапы формирования и развития принципа разделения и уравновешивания властей в РА, в результате чего были выявлены основные свойства, характеризующие каждую модель разделения и уравновешивания властей в РА, препятствовавшие эффективному действию принципа разделения и уравновешивания властей. Предметом системного анализа послужили основные свойства, характеризующие систему разделения и уравновешивания властей в результате конституционных изменений в РА в 2015г.

Ключевые слова: *принцип разделения и уравновешивания властей, функциональное разделение ветвей власти, институциональное разделение ветвей власти, механизмы сдерживания и противовесов, конституционные изменения, консенсусная модель разделения и уравновешивания властей.*

Hayk Kesoyan

Staff of The Ministry of Justice of Republic of Armenia,
Legal-Organization Department, First-Class Specialist,
PhD Student of Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY***The problem of ensuring the principle of separation and balance
of powers in the Republic of Armenia***

The article has studied the stages of formation and development of the principle of separation and balance of powers in the Republic of Armenia, with the result that revealed the main properties that characterize each model of separation and balance of powers in Armenia, hindering the effective action of the principle of separation and balance of powers. The subject of the system analysis were the main properties that characterize the system of separation and balance of powers as a result of the constitutional amendments in RA in 2015.

Keywords: *the principle of separation and balance of powers, functional separation of powers, institutional separation of powers, mechanisms of checks and balances, constitutional changes, the consensus model of the separation and balance of powers.*